

Ի՞նչ անել, երբ երեխան գողանում է

Երբ ծնողներն իմանում են, որ իրենց երեխան առանց թույլատվության վերցրել է ուրիշի իրը, հաճախ չեն կողմնորոշվում, ինչպե՞ս դրսևորել իրենց:

Հոգեբանները զանազանում են նման իրավիճակների մի քանի դեպքեր, երբ երեխան փորձում է ձեռքբերել ուրիշի ունեցվածքը: *Ինչո՞ւ են երեխաները գողանում:*

Նախևառաջ այն պատճառով, որ նրանք ցանկանում են հավասարվել մյուս երեխաներին: Փոքրիկը ցանկանում է ունենալ ճիշտ այնպիսի գեղեցիկ ու արտասովոր իր, հագուստ կամ խաղալիք, երև ունի իր ընկերը: Երբ ծնողները չեն համաձայնվում գնել այն, երեխան կարող է փորձել ձեռք բերել այդ իրերը անարդար ճանապարհով:

Գողությունը կարող է լինել դեպի իրեն ուշադրություն հրավիրելու փորձ: Երեխան, որը մտածում է, թե իրեն չեն սիրում ու չեն հասկանում, կարող է մտածված կերպով խախտել կանոնները, որպեսզի ծնողները հիշեն իրեն:

Երբեմն այդ եղանակով փոքրիկն իր երազանքներն է իրականացում: Երբ երեխան ինչ-որ բան շատ է ցանկանում, իսկ ցանկալին շատ մոտ է գտնվում, նա կարող է գայթակղությանը չդիմանալ:

Երեխան կարող է գողանալ, քանի որ իր ընկերները գողանում են: Այսպիսի գողություններն ամենավտանգավորն են, քանի որ կատարվում են կանխամտածված:

Իսկ ինչպե՞ս արձագանքել երեխայի գողությանը:

Նման դեպքերում լուրջ և խիստ խոսակցությունը պարտադիր է: Երեխան պետք է գիտենա, որ նման արարքները Դուք բացարձակապես չեք ողջունում: Սակայն միաժամանակ նա պետք է իմանա, որ Դուք չեք դադարում նրան սիրել:

Գողացված իրն անպայման պետք է վերադարձվի տիրոջը: Ընդ որում, դա պետք է արվի հնարավորինս արագ և նրբանկատ:

Եթե երեխան գողությունը կատարել է



ընկերների հետ միասին, անհրաժեշտ է օգնել նրան ազատվել հասակակիցների բացասական ազդեցություններից: Նման դեպքում պետք է անպայման գրուցել երեխայի դաստիարակների ու ուսուցիչների հետ: Եթե կարիք առաջանա, պետք է դիմել հոգեբանի օգնությանը: Երբեմն ավելորդ չի լինի դպրոցը փոխելը:

Ի՞նչ չպետք է անել:

Եթե գողությունը կատարվել է, օրինակ, դպրոցում կամ մանկապարտեզում, ապա իրավիճակը պետք չէ քննարկել այլ երեխաների ներկայությամբ:

Պետք չէ մտածել, որ եթե երեխան մեկ անգամ գողացավ, ապա նա անուղղելի հանցագործ է: Պետք չէ նրան մեղադրել ամեն ինչում:

Երեխայի արարքը մի քննարկեք նրա եղբայրների և քույրերի կամ այլ հարազատների ներկայությամբ:

Երբեք մի՛ հիշեցրեք երեխային իր արարքի մասին: Ամեն ինչ պարզելուց հետո, անգամ կատակով, մի հիշեք այդ դեպքը: